ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱԲՈՎՅԱՆԻ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՎՀՀ 03510416
ՀԵՌ. 0222-2-57-92, 2-57-9.
378510 Ք. ԱԲՈՎՅԱՆ
ՏԱՐՏՈՒԻ ՓՈՂՈՑ 1/15
Էլեկտրոնային փոստի հասցե
abovyan2@schools.am

N 373

<< 20 >> 10 2021թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում Կոտայքի մարզի <<Աբովյանի N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի ֆիզիկայի՝ մեկ (10 դասաժամ), ֆիզկուլտուրայի՝ մեկ (20 դասաժամ) և ռուսաց լեզվի և գրականության՝ մեկ (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար անցկացվող մրցույթի հայտարարությունը

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Աբովյանի N2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում հետևյալ թափուր աշխատատեղը համալրելու համար.

«Ֆիզիկա» առարկայի ուսուցչի մեկ աշխատատեղ (10 դասաժամ)

«Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչի մեկ աշխատատեղ (20 դասաժամ)

«Ռուսաց լեզու և գրականություն» առարկայի ուսուցչի մեկ աշխատատեղ (20 դասաժամ):

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում էհաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցութին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:

8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջում հայտարարության հրապարակման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում մինչև նոյեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 5-ին ՝ ժամը 14:00-ին, Կոտայքի մարզի Աբովյանի հ.2 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Աբովյան, Տարտուի փողոց 1/15:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0222)2-57-92 կամ 2-57-93 հեռախոսահամարներով:

Դպրոցի տնօրեն՝ Ս. Հովհաննիսյան